Արձանագրություն N2
ՀՄՄԱԲԿ-ԲՄԱՇՁԲ-77/25 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

31.10.2025թ.
ժամը 11^{00}

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Սեթ Վարդանյան ԳՊ/ԳԱՊ
Անդամներ՝ Ռաֆիկ Երվանդյան ԳՊ/ԳԱ
Վահրամ Եղիազարյան ԳՊ/ԳԱ
Արթուր Դավթյան ԳՊ/ԲԱ
Վրույր Ստեփանյան ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝ Արմինե Նավասարդյան ԳՊ/ՄՀՄ

1. Գնման հայտով նախատեսված միավորի գնի մասին

Սեթ Վարդանյան

Ընթացակարգը հայտարարվել է ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով: Գնման ենթակա աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 408439900 դրամ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի հայտերի բացման մասին

Սեթ Վարդանյան

Հրավերը հրապարակվել է armeps համակարգում 2025 թվականի հոկտեմբերի 1-ին, հայտերի բացումը տեղի է ունեցել 2025 թվականի հոկտեմբերի 31-ին:

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Գնային առաջարկ ներկայացրած կազմակերպության էլեկտրոնային հասցեն, հվհհ-ն, հասցեն
1	«ԷԼԻՏ ՀԻԼԶ» ՍՊԸ և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ ԱՐԳՈՍ» ՍՊԸ կոնսորցիում	էլ.փոստ: elithilzc@yahoo.com հվհհ: 04421922 հասցե: ք.Երևան, Քաջազնունի 1 էլ.փոստ: interevros-argos@mail.ru հվհհ: 02245698 հասցե: ք.Երևան, Դավիթաշեն 3-րդ թաղ. 19/3
2	«ԼԵՎ ՇԻՆ» ՍՊԸ և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ ԱՐԳՈՍ» ՍՊԸ կոնսորցիում	էլ.փոստ: lev.shin.83@mail.ru հվհհ: 08620512 հասցե: ք.Սևան, Լճափնյա 11 էլ.փոստ: interevros-argos@mail.ru հվհհ: 02245698 հասցե: ք.Երևան, Դավիթաշեն 3-րդ թաղ. 19/3
3	«ԲԻԼԴԻՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ կոնսորցիում	էլ.փոստ: builderconstraction.llc@gmail.com հվհհ: 00499522 հասցե: ք.Երևան, Արցախի պող. Շ. $18^{ա}$, 37 բն. էլ.փոստ: bedeck.llc@mail.ru հվհհ: 00450801 հասցե: ք.Երևան, Սասունցի Դավիթ $87^{ա}$

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հարցումների և ներկայացված պատասխանների մասին

Սեթ Վարդանյան

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը կասեցնելու մասին

Սեթ Վարդանյան

Մասնակիցների հայտերի ոչ գնային պայմանները ուսումնասիրելու համար նիստը կասեցնել՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի պահանջները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

04.11.2025թ. ժամը 10^{00} նիստը վերսկսվում է.

5. Տվյալներ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և պահանջների համապատասխանության մասին մասին

Սեթ Վարդանյան

«ԷԼԻՏ ՀԻԼԶ» ՍՊԸ և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ ԱՐԳՈՍ» ՍՊԸ կոնսորցիում մասնակիցների հայտում բացակայում է հրավերով սահմանված կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող շինարարության իրականացման լիցենզիան և ներդիրները:

«ԼԵՎ ՇԻՆ» ՍՊԸ և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ ԱՐԳՈՍ» ՍՊԸ կոնսորցիում մասնակիցների հայտում բացակայում են հրավերով սահմանված կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող շինարարության իրականացման լիցենզիան և ներդիրները, ինչպես նաև համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիրը:

«ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ կոնսորցիում մասնակիցների կողմից ներկայացված հայտում անհրաժեշտ փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Նիստը կասեցնելու և մասնակիցներին հայտերում առկա անհամապատասխանությունների մասին տեղեկացնելու մասին

Սեթ Վարդանյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները (Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ....., ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:.....) նիստը կասեցվում է:

Գնումների համակարգողին. էլեկտրոնային փոստով ծանուցել **«ԼԵՎ ՇԻՆ» ՍՊԸ և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ ԱՐԳՈՍ» ՍՊԸ** կոնսորցիում մասնակիցներին և **«ԷԼԻՏ ՀԻԼԶ» ՍՊԸ և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ ԱՐԳՈՍ» ՍՊԸ** կոնսորցիում մասնակիցներին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին

Սեթ Վարդանյան

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2025 թվականի նոյեմբերի 6-ին ժամը 15[00] «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ քաղաք Արմավիր, Շահումյան 3 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Սեթ Վարդանյան

Անդամներ՝ Ռաֆիկ Երվանդյան

Արթուր Դավթյան

Վահրամ Եղիազարյան

Վրույր Ստեփանյան

քարտուղար՝ Արմինե Նավասարդյան